ԳԵՂԱՄ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ. դոցենտ
hovhannisian@mail.ru
ID 0009-0002-9549-8974
DOI:10.59523/1829-4596.2024.2(29)-71

ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՎԵՐԱԿԱԶՄՅԱԼ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ (1911-1921)*

Բանալի բառեր՝ Վերակազմյալ հնչակյան, Արագած, Պահակ, Հայկաշէն, ազգային գաղափարախոսություն, Հայաստանի հանրապետություն, Թուրքիա, Ռուսաստան:

Ներածություն

XX դ. սկզբների հայ քաղաքական մտքի և հրապարակախոսության զարգացումը սերտորեն շաղկապված էր կուսակցական մամուլի հետ: Այս գործում լուրջ ներդրում է ունեցել նաև Վերակազմյալ հնչակյան (1918-ից Ազգայնական-ազատական) կուսակցության մամուլը: Անդրադառնանք այդ կուսակցության 1911-1921 թթ. լույս ընծայած պարբերականներին և, հատկապես, դրանցում բարձրացված ազգային խնդիրներին: Այդ պարբերա-

* *Ներկայացվել է 07.X.2024 թ., գրախոսվել է 10.X.2024 թ., ընդունվել է տպագրության 15.XII.2024 թ.:*

կաններն են «Արագած» հանդեսը (Նյու Յորք, 1911, Կ. Պոլիս, 1919-1920), «Հայկաշէն» ամսաթերթը (Թիֆլիս, 1917-1918) «Պահակ» եռօրյա թերթը (Բոստոն, 1917-1921):

1919-1921 թթ. Ազգայնական-ազատական կուսակցության պարբերականներից էին նաև Ֆրեզնոյի «Արօրը», Ադանայի «Կիլիկեան սուրհանդակը» (1919-1921) և Կ. Պոլսի «Առաւոտը» (1919-1924), սակայն հոդվածում քննության են ենթարկվում միայն «Արագածը», «Պահակն» ու «Հայկաշէնը», քանի որ մեզ չի հաջողվել գտնել «Արօրի» ու «Կիլիկեան սուրհանդակի» համարները: Ինչ վերաբերում է Կ. Պոլսի «Առաւօտին», ապա սրան անդրադարձել ենք առանձին հոդվածով[1]:

Պարբերականները խմբագրել են այդ կուսակցության հայտնի տեսաբաններ Վահան Շահրիմանը («Արագած»), Հրաչ Երվանդը («Պահակ»), Պետրոս Տեփոյանը («Հայկաշէն»):

Ազգային խնդիրներն «Արագած» հանդեսում (1911 թ.)

1911 թ. Նյու Յորքում լույս էր տեսնում «Արագած» հանդեսը, որի խմբագիրն էր Վերակազմյալ հնչակյան կուսակցության հայտնի տեսաբան Վահան Շահրիմանը: «Արագածի» Ազգային քրոնիկ բաժնում մեծ տեղ էր հատկացվում Կ. Պոլսի հայ ազգային-հասարակական

[1] Գտնվում է տպագրության ընթացքում

կյանքին: Լևոն Աշոտի մի հրապարակումը լույս է սփռում պատրիարքական ընտրությունների վրա, որում վերակազմյալների թեկնածուն Եղիշե Դուրյանն էր[2]: Մեկ այլ հաղորդման մեջ լուսաբանվում էր Կ.Պոլսի հայոց ազգային ժողովի գործունեությունը[3]: Պարբերականն արծարծում էր նաև գաղթօջախներում հայ ինքնության պահպանման հարցը: Դրան էր նվիրված Մարկոս Նաթանյանի «Հայության ապագան» հոդվածը[4]: Այս հարցի համատեքստում է Ամերիկահայ ուսանողական միության երկրորդ ընդհանուր ժողովի հանդեպ «Արագածի» ցուցաբերած մեծ ուշադրությունը: Թերթը դրան նվիրել է մի ամբողջ համար[5]:

Ազգային խնդիրների նկատմամբ հայ ունևոր խավերի վերաբերմունքի հարցը միշտ եղել է վերակազմյալ հնչակյանների ուշադրության կենտրոնում: Հայ հարուստների կողմից հայրենիքի հանդեպ պարտականությունների կատարման հարցն է բարձրացված Վ. Շահրիմանի «Պարտականութիւն, այլ ոչ թէ ողորմութիւն» վերնագրով հոդվածում: Հեղինակը մասնավորապես գրում է. «Հայրենիքին սա կամ նա անկիւնը գտնող մէկ քանի դպրոցներ ու մէկ քանի ոսկի ղրկելը բարեգործութիւն չէ, ատիկա ամօթալի կաշառք մըն է: Մենք դէմ

---

[2] Արագած. 1911, № 2:
[3] Արագած. 1911, № 1:
[4] Արագած. 1911, № 3:
[5] Արագած. 1911, № 8:

չենք մեր ունևորներուն, բայց երբ հայրենիքին հանդէպ իրենց ունեցած պարտականութիւնը խղճմտօրեն չէն կատարեր, այլ ողորմելով անոր կը նուաստացնեն զայն, անհանդուրժելի կը գտնենք իրենց ընթացքը»[6]:

Ազգային խնդիրների շարքում քննարկվող ամենացավոտ հարցը թերևս 1909 թ. կոտորածից հետո Կիլիկիայի հայության դրությունն էր: «Արագածի» էջերում լայն արձագանք ստացավ Ադանայի պետական որբանոցի շուրջ ստեղծված վիճակը: Այստեղ օսմանյան կառավարության նպաստով պահվում էր 500 որբ երեխա, ուստի այն դիտվում էր որպես պետական հաստատություն: Պարբերականի անհանգստության բուն պատճառը որբերի կրթության հարցն էր: Այն պետք է ազգային բնույթ ունենար, իսկ դա կարող էր լինել միայն այն դեպքում, եթե Ադանայի որբանոցը դրվեր Կ. Պոլսի Ազգային պատրիարքարանի իրավասության տակ[7]:

Կիլիկիայի որբանոցների թեման արծարծվում է «Արագածի» նաև այլ համարներում, որտեղ «Կիլիկիոյ որբանոցները» վերնագրով հոդվածներ էր գրում Զապել Եսայանը[8]: Ազգային առաջընթացի հարցի շուրջ մտորումները վերակազմյալ հնչակյաններին բերում էր այն համոզման, որ դրա իրականացումն անխուսափելիորեն կապված է ազգային դաստիարակության հետ, այստե-

---

[6] Արագած. 1911, № 14:
[7] Արագած. 1911, № 11:
[8] Արագած. 1911, № 13:

ղից էլ՝ «նոր սերունդ» ունենալու պահանջի առաջադրումը: Թերթի «Ողնաշարը» խմբագրականում Վ. Շահրիմանը գրում էր, որ հայ ժողովրդի գոյության կռվում պիտի հաղթի «առողջ և կենսունակ դաստիարակությամբ մը արի, մեր նոր սերունդին Հայկը, որ մեր յոյսերուն ասպետը պիտի ըլլայ, մեր հաւատամքն է ասիկա»[9]:

Պարբերականի «Նոր սերունդ» վերնագրով խմբագրականում ցույց էր տրվում, որ «Ազգային վերածննդի գործը» հաջողությամբ առաջ տանելու համար անհրաժեշտ է նոր սերունդ, քանի որ հնին բնորոշ են եղել ստրկամտությունը, կորովի անկումը, հայրենասիրության բացակայությունը, իսկ այդպիսի հատկանիշներով ազգը չի կարող ազատագրվել: Խմբագրականը հայոց պատմության հերոսական օրինակներով հիմնավորում էր ազատագրության վեհ գաղափարին փարված մնալը[10]: Հարցի արծարծումը շարունակվում է «Արագածի» մի քանի համարների «Նոր սերունդ» վերնագրով խմբագրականներում[11]:

«Արագածի» էջերում սուր անդրադարձներ կան Օսմանյան սահմանադրության և Թուրքիայում բարենորոգումների իրականացմանը: «Բռնապետությունը եւ սահմանադրությունը Թուրքիոյ մեջ» խմբագրականում շեշտվում էր, որ Թուրքիայում շուրջ 3 տարի իշխող սահմա-

---

[9] Արագած. 1911, № 2:
[10] Արագած. 1911, № 3:
[11] Արագած. 1911, № 4:

նադրական կառավարության օրոք թեև երևութապես շատ բաներ են փոխվել, բայց «Հիմնական որևէ յեղաշրջում տեղի չէ ունեցած, առաջ միապետական բռնատիրութիւնը կար, իսկ հիմա՝ սահմնադրական բռնապետութիւնը»[12]:

Մտորելով 1908 թ. հեղաշրջման հարցի շուրջ՝ Լ. Լարենցը գրում էր, որ երիտթուրքերն այն իրականացրին ոչ այնքան քաղաքական ազատության հասնելու ձգտումով, որքան ազգայնամոլական նպատակներից ելնելով: Քանի դեռ թուրք ժողովրդի և օսմանյան խորհրդարանի մեծամասնությունը տառապում է կրոնամոլության և ազգայնամոլական ախտով, հայ ժողովրդին երջանիկ ապագա չի սպասվում, եզրակացնում էր հրապարակախոսը[13]:

Հանրագումարի բերելով Թուրքիայի նախորդ և ներկա իշխանությունների գործունեությունը, «Օսմանեան խորհրդարանի Գ. Տարեշրջանը» վերնագրով հոդվածում Լ. Լարենցը գտնում էր, որ եթե սահմանադրության հռչակած սկզբունքների վրա ձևավորված ժողովը պիտի աչք փակի պետական հայաջինջ քաղաքականության ծրագրի վրա, ապա «ինչպէ՞ս հայ ազգը յուսալիր աչքերով նայի օսմանեան խորհրդարանի վրայ»[14]:

«Մամուլի արդի վիճակը երիտասարդ Թուրքիոյ մեջ»

---

[12] Արագած. 1911, № 16:
[13] Արագած. 1911, № 2:
[14] Արագած. 1911, № 20:

հոդվածում նա խոսում էր երիտթուրքական կառավարության հաստատած խիստ գրաքննության մասին[15]: Օսմանյան խորհրդարանի գործունեության և Թուրքիայում բարենորոգումների իրականացման հարցերի վերաբերյալ «Արագածում» հոդվածներով հանդես է եկել նաև «Արևորդի» ծածկանունով հրապարակախոսը[16]: «Բարենորոգման գործը Թուրքիոյ մէջ» հոդվածում նա գտնում էր, որ այդ խնդիրը չի լուծվում, որովհետև օսմանյան կառավարությունն ազգայնամոլ քաղաքականություն է վարում ոչ թուրք ժողովուրդների հանդեպ: Դա, ըստ նրա, անխուսափելիորեն հանգեցնելու էր բախումների, ապստամբությունների, արտաքին միջամտության[17]: «Արագածի» ուղենիշներից մեկն էլ մշակութային կյանքի լուսաբանումն էր, որի բուն նպատակն ազգային մշակույթի քարոզչությունն էր հայ իրականության մեջ՝հայկական մշակույթի ակունքներին և ավանդույթներին հավատարիմ մնալը:

Ազգային խնդիրները «Պահակ», «Հայկաշէն», «Արագած» պարբերականներում

Վերակազմյալ հնչակյան մամուլի վերազարթնումը տեղի ունեցավ 1917 թ., երբ Բոստոնում սկսվեց «Պահակ» թերթի հրատարակությունը: Այն դարձավ կուսակցության

---

[15] Արագած. 1911, № 4:
[16] Արագած. 1911, № 5, 6:
[17] Արագած. 1911, № 3:

Ամերիկայի շրջանի պաշտոնաթերթը: Նշենք, որ ինչպես ասվեց, 1918 թ. «Ազգայնական-ազատական» անվանումը ստացած Վերակազմյալ հնչակյաններն իրավացիորեն գտնում էին, որ ռուսական հեղափոխությունները և դրանց հաջորդած դրամատիկ իրադարձություններն ուղղակի ազդելու էին հայ ժողովրդի ճակատագրի վրա: Պատահական չէր, որ կուսակցության տպագիր օրգաններում մեծ տեղ էին գրավում այս թեմայով հրապարակումները[18]:

«Պահակը» հայ ժողովրդին զգուշացնում էր հեռու մնալ սոցիալական շարժումներից, գտնելով, որ դրանք մարդկանց ու ժողովուրդներին հեռացնում էին ազգային գաղափարներից և ազգի հավաքական շահերի գիտակցությունից՝ փոխարենը սերմանելով դասակարգային շահի առաջնայնության գաղափարը[19]: Թերթը նշում էր, որ Ռուսաստանի ժամանակավոր կառավարության ղեկավար Ա. Կերենսկին իրավացի է, գտնելով, որ Կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերի դուրսբերումն անխուսափելիորեն հանգեցնելու է հայկական նոր կոտորածների[20]:

1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո բոլշևիկյան ծայրահեղ գաղափարները մերժող Ազգայնական-ազատական կուսակցության օրգան «Հայկաշէնը» Կով-

---

[18] Պահակ. 1917, № 67:
[19] Պահակ. 1917, № 72:
[20] Պահակ. 1917, № 72:

կասյան ռազմաճակատի փլուզման համար դատապարտում էր Անդրկովկասյան կոմիսարիատին, որը նրա կարծիքով գործնական քայլեր չկատարեց դա կանխելու համար: Թերթը քննադատում էր նաև հայ մենշևիկներին, որոնք խուսափելով «նացիոնալիստներ» կոչվելուց, «ստրուկի համառութեամբ ջատագովում էին ռուս մեծ հայրենիքը»[21]:

Ազատականներին մտահոգում էր հետպատերազմյան Հայաստանի ապագայի հարցը, որը կապվում էր Անտանտի պետությունների հետ: «Պահակն» անդրադառնալով պատերազմից հետո ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի և Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջի հայտարարություններին, եզրակացնում էր, որ ապագա հաշտության պայմանագրում «Հայաստանն եւ իր բաղդակից երկրները խաղաղութեան պայմաններէն մեկը կը կազմեն այլևս եւ անոնք չպիտի վիճարկուին պատերազմէն առջևի վիճակին»[22]: Թերթը հույս էր հայտնում, որ «Թուրքիան պատժուի իր ոճիրներուն համար»[23]: «Պահակի» «Նուրհան» ծածկանունով թղթակիցը «Մոտաւոր Արևելքի փրկութիւնը» հոդվածում անդրադառնում էր պատերազմի ընթացքում հայ ժողովրդի կրած դժոխային տառապանքներին և հայությանը ամերիկյան հյուպա-

[21] Հայկաշէն. 1917, № 1-2:
[22] Պահակ. 1918, № 103:
[23] Պահակ. 1918, № 103:

տոսների ու միսիոներների ցուցաբերած օգնությանը[24]:

1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո բոլշևիկյան Ռուսաստանի արտաքին քաղաքական ուղեգծի փոփոխությունը լուրջ անհանգստություն առաջացրեց հայության շրջանում: «Հայկաշէնում» շեշտվում էր այն միտքը, որ թեպետ Վ. Լենինի կառավարությունն առանձին դեկրետով ճանաչել էր թուրքահայերի ազատ ինքնորոշման իրավունքը, բայց այն մնում էր սոսկ հայտարարություն, քանի որ դրա կենսագործման համար իրական ուժ չկար: Ընդգծվում էր, որ Կովկասյան ռազմաճակատից ռուս զինվորների հեռացումը ու դրան հաջորդած թուրքական զորքերի առաջխաղացմանը մեծապես նպաստեց բոլշևիկների վարած քաղաքականությունը[25]: Էրզրումի անկման պատճառների մասին խոսելով «Հայկաշէնը» մատնացույց էր անում հայկական զորամասերի թույլ մարտականությունն ու ցածր կարգապահությունը, ազգի անունից խոսող փառասեր, շահամոլ ու բախտախնդիր անհատների գործունեությունը, որն աղետավոր հետևանքներ թողեց[26]:

Ընդհանրապես նկատելի է, որ ազատական մամուլի հրապարակումներում հաճախ են արծարծվում հայ ժողովրդի ճակատագրում մարդկային գործոնի դերի և ազգային հոգեբանության առանձնահատկությունների հար-

---

[24] Պահակ. 1918, № 87:

[25] Հայկաշէն. 1918, № 3:

[26] Հայկաշէն. 1918, № 5-6:

ցերը: «Հայ քաղաքական իդեալիզմը» հոդվածում «Հայ-կաշէնի» «Պարթեւ» ծածկանունով հոդվածագիրը հայ ժողովրդի անցած ուղին քննելով գտնում էր, որ ստեղծված իրավիճակի համար պատասխանատու են նաև հայերը, որոնք չեն կարողացել երբևիցե ըմբռնել այն պարզ ճշմարտությունը, թե «աւազակին հետ դրացիութիւն ընող կամ ինքն ալ աւազակ պետք է ըլլայ ոտքեն մինչև գլուխը զինուած ամէն րոպէ ինքնապաշտպանութեան պատրաստ, կամ պետք է միանգամ ընդմիշտ անվնաս դարձնէ զայն՝նախ գործնականապէս ապացուցանելով իր ոյժը և ապա նստակեաց կեանքի վարժեցնելով զայն: Ոչ մեկն ըրած ենք, ոչ միւսը: Եւ հետևանքն այն եղած է որ մեկ կողմէ կառավարական սիսթեմաթիք ջարդերը, միւս կողմէ քիւրտական շահատակութիւնները և երրորդ կողմէ զանազան «բարեկամներու» դիւային ծրագիրները շարունակ քայքայած են մեր հայրենիքը»[27]: Ըստ հոդվածագրի, այսպիսի պայմաններում հայ ժողովուրդն իր փրկությանը միշտ սպասել է դրսից, ու մինչև երբ է շարունակվելու հայ ժողովրդի այդ յուրատեսակ «իդեալիզմը», հռետորական հարց էր բարձրացնում հեղինակը[28]:

Պահակի» էջերում ազատականները կարևորում էին վերածնված դեմոկրատական Հայաստանում ազգային կրթության արմատավորումը: Նրանց պատկերացմամբ՝ Հայաստանում կրթության բովանդակությունը պիտի լինի

[27] Հայկաշէն. 1918, № 4:
[28] Հայկաշէն. 1918, № 4:

ազգային, իսկ դպրոցները՝ պետական (դա վերաբերվում էր միայն տարրական ու միջնակարգ դպրոցներին): Ազատականները զգուշանում էին մասնավոր դպրոցներից՝ գտնելով, որ դրանք անխուսափելիորեն ունենալու են «կրոնական և այլ մասնավոր նպատակներ», որոնք կարող են վտանգավոր լինել հայ ազգային ուժերի համախմբման տեսակետից[29]:

Ազատականները մտահոգված էին 1919 թ. ծավալվող թուրք ազգայնական շարժմամբ: Օրինակ, «Դեպքը Անատոլուի մէջ» հոդվածում ուղղակիորեն ասվում է, որ Մուստաֆա Քեմալի կազմակերպությունը, եթե անգամ Իթթիհատի հետ կապ չունի, այնուամենայնիվ, համաիսլամական ձգտումներով լցված մոլեռանդների խմբավորում է, հիմնված «թուրք ժողովրդին կեավուրին հանդէպ ունեցած ատելութեան» վրա[30]: Այս համատեքստում է Կիլիկիայում տեղի ունեցող հայերի կոտորածների կապակցությամբ ամերիկահայերի ազգային միության նախագահ Միհրան Սվազլյանի «Պահակում» հրապարակված դիմումն ԱՄՆ-ի կառավարությանը: Այստեղ շեշտվել է այն հանգամանքը, որ քանզի քեմալական շարժման ակտիվացումը կիլիկիահայության համար մեծ սպառնալիք է, ամերիկահայությունն ակնկալում է, որ ԱՄՆ-ի կառավարությունն Անտանտի իր դաշնակիցների հետ քայլեր կկատարի ստիպելու թուրքերին գործադրելու զինադա-

---

[29] Պահակ. 1919, № 30:

[30] Արագած. 1919, № 45:

դարի պայմանները, որն ի վերջո հանգում էր հայերի քաղաքական ու տնտեսական անվտանգության ապահովմանը[31]:

Ազատականները հույսեր էին փայփայում, որ Փարիզի վեհաժողովում հաշվի կառնվեն հայ ժողովրդի մեծ զոհողությունները և որ այն կառաջնորդվի «արդարութեան և մարդկայնութեան» գաղափարներով[32]: Դրա հետ մեկտեղ, պատմության օրինակներով (Բեռլինի վեհաժողով, Մայիսյան բարենորոգումների ծրագիր և այլն) ցույց է տրված, որ օտար պետություններից ակնկալվող անվտանգության ապահովման հայ ժողովրդի հույսերը չեն արդարացել[33]:

Իրենց պարբերականներում ազատականներն արծարծել են ազգային ներքին կյանքում գոյություն ունեցող բացասական երևույթների խնդիրը: «Արագածի» «Երբ պիտի խրատուինք» խմբագրական հոդվածում տեսակետ էր առաջ քաշվում, որ հայ ժողովուրդը դեռևս ազգովին չի ճշտել իր քաղաքական նպատակը, և ինքնախաբեությամբ սպասում է, որ «ուրիշներ բերեն իր երազած բարիքները»: Խմբագրականը «եղկելի» էր որակում այն երևույթը, երբ քաղաքական անհաջողությունների պատասխանատվությունը հայ ազգային ուժերը որոնում են դրսում՝ առանց տեսնելու սեփական պատասխանատ-

---

[31] Պահակ. 1919, № 31:

[32] Արագած. 1919, № 1:

[33] Արագած. 1920, № 50:

վության բաժինը[34]:

«Պահակը» հիասթափությամբ էր խոսում 1919 թ. փետրվարին Փարիզում ընթացող հայկական համագումարի աշխատանքների մասին՝ գրելով. «Ուզում ենք լավատեսի աչքերով նայել իրադարձությունների զարգացմանը, բայց նկատում ենք, որ հայ ժողովրդի ամենամեծ ու տնաքանդ վերքը՝ անմիաբանությունը, չար նախանձը մեծ վնաս կարող է տալ մեր խնդրին»[35]: «Անխուսափելին» խմբագրական հոդվածում Վ. Շահրիմանն ուղղակիորեն գրում է, որ հարգանքի է արժանի միայն այն ժողովուրդը, որը կռվի է ելել պաշտպանելու իր պատիվն ու իրավունքները, հակառակ պարագայում, «ազգը ինքնասպանութիւն գործած կըլլայ պարզապէս»[36]: Այս համատեքստում է Հ. Պոնճուքյանի «Ապագա Թուրքիան և մենք» հոդվածը, որում հեղինակն իրավացիորեն գրել է, որ հայ ժողովրդի ազատագրական պայքարի հաջողությունը պայմանավորված է նրա ինքնապաշտպանության պատրաստվածությամբ, հայկական պետության ներքին ամրությամբ և հայ դիվանագետների հմտությամբ[37]:

Այս խնդիրները նկատի ունենալով էր «Արագածը» գրում, որ հայության համար ազգայնականությունը սոսկ քաղաքական ուսմունք չէ, այլ կենսական անխուսափելի

---

[34] Արագած. 1919, № 16:
[35] Պահակ. 1919, № 35:
[36] Արագած. 1919, № 38:
[37] Արագած. 1919, № 41:

անհրաժեշտություն, որը բխում է օբյեկտիվ իրականությունից[38]:

Պարբերականում կարմիր թելի պես անցնում է համահայկական խնդիրների շուրջ ազգային բոլոր ուժերի համագործակցության գաղափարը[39]:

Դեռևս 1919 թ. գարնանը ազատական մամուլում մտավախություն էր հայտնվում, որ բոլշևիզմի հաղթանակը բացասական ազդեցություն կունենա Հայկական հարցի լուծման վրա[40]: Բարձրացնելով սոցիալիզմի գաղափարախոսության նկատմամբ հայ ժողովրդի վերաբերմունքի հարցը, Վահան Շահրիմանը գրում էր, որ իրենց գոյության խնդրով մտահոգված փոքր ժողովուրդները «դառնորեն համոզուեցան, թե իրենց ազգային ճակատագրին դէմ ոճիր մը գործած պիտի ըլլան, եթե ընկերվարական վարդապետութիւններէ փրկութիւն ակնկալէն»՝ առանց նկատի ունենալու այն պայմանները, «ուժերը, ցեղերը, որոնցով շրջապատուած է իրենց հավաքական կեանքը»[41]:

Խոսելով Երկրորդ ինտերնացիոնալի քայքայման մասին, Բոստոնի «Պահակը» գրում էր. «Երան՛ի թէ Պեռնի խորհրդաժողովին մէջ երևան եկած գաղափարի խայտաբղետութիւնը գոնէ հայ ընկերավարականները համո-

---

[38] Արագած. 1919, № 35:
[39] Արագած. 1919, № 41, 42, 44, 49:
[40] Պահակ. 1919, № 20:
[41] Արագած. 1919, № 19, 21:

զէր, որ ինթեռնացիոնալին հավատք ընծայել կարելի չէ»[42]: Թերթը գտնում էր, որ «ընկերվարութեան վտանգին դէմ» հայ ժողովրդի միակ պատնեշն ազգայնականությունն է, որը կարող է պահպանել ազգը որպես հաստատուն և առողջ օրգանիզմ, հավաքական ուժ: Ըստ ազատականների՝ ազգայնականության հիմնասյուներն են հայրենիքի անկախության գաղափարը, հարգանքն ու հավատը ազգային պատմության, մշակույթի և ավանդույթների հանդեպ[43]:

Ուշագրավ է սակայն, որ բոլշևիկներին քննադատելով «Պահակը» համակրանքով էր խոսում Ստեփան Շահումյանի մասին և Բաքվում ծավալած նրա գործունեությունը բնութագրում որպես հայանպաստ[44]: Ազատականները տագնապով էին հետևում քեմալաբոլշևիկյան համագործակցության ծավալմանը, որը լուրջ սպառնալիք էին համարում Հայաստանի Հանրապետության համար: Բարձրացնելով Վրաստանի ու Ադրբեջանի հետ հարաբերությունների հարցը, «Պահակը» փաստում էր Վրաստանի երկդիմի քաղաքականությունը, Ադրբեջանի ագրեսիվ, նվաճողական ձգտումները և հոռետեսորեն էր տրամադրված այդ պետությունների հետ Հայաստանի դաշինքին[45]: Թերթն ահազանգում էր կիլիկիահայության

---

[42] Պահակ. 1919, № 26:
[43] Պահակ. 1919, № 31:
[44] Պահակ. 1919, № 34:
[45] Պահակ. 1920, № 46:

ծանր դրության մասին: Ֆրանսիային որդեգրած հակահայկական քաղաքականության բացահայտ դրսևորումից հետո «Պահակը» դատապարտեց «ասպետական ու քաղաքակիրթ» Ֆրանսիայի թուրքամետությունը[46]:

1920 թ. հունիսին ԱՄՆ-ի սենատի կողմից Հայաստանի մանդատի մերժումը մեծ ազդեցություն գործեց ազատականների մտայնության և հետագա գործելակերպի վրա: Նկատելի էր դառնում աստիճանական շրջադարձը դեպի խորհրդային Ռուսաստանի հետ համագործակցությունը: Թեպետ «Պահակը» դատապարտեց Հայաստանի բոլշևիկների մայիսյան ապստամբությունը, բայց դրա հետ մեկտեղ ՀՀ կառավարությանը կոչ էր անում ջանքերն ուղղելու բոլշևիկյան Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորմանը[47]: Վերլուծելով ստեղծված իրադրությունը, «Պահակը» Ռուսաստանի Այսրկովկաս ներխուժելու դեպքում հավանական չէր համարում հայ-ռուսական ռազմական առճակատումը, գտնելով, որ Հայաստանը պիտի դառնա «պաշտօնապէս պոլշէվիք»[48]: Հայաստանի խորհրդայնացումից հետո բոլշևիզմի հետ ունեցած գաղափարական տարաձայնությունները թեև չվերացան, սակայն ազատականների համար առաջնային դարձավ ազգային պետության գործոնը, այն իրողությունը, որ իր պատմական հայրենիքի մի մասում հայ

---

[46] Պահակ. 1920, № 54:
[47] Պահակ. 1920, № 46, 56:
[48] Պահակ. 1920, № 46, 56:

ժողովուրդը վերակերտեց իր պետականությունը: Ազատականները դատապարտեցին 1920 թ. փետրվարյան ապստամբությունը և դաշնակցությունից պահանջեցին դադարեցնել հակախորհրդային գործունեությունը[49]: Խորհրդային Հայաստանի ներքաղաքական ու տնտեսական կյանքը լայնորեն լուսաբանվում էր ազատական մամուլի էջերում: «Պահակը» գովեստով էր խոսում Ալ. Մյասնիկյանի մասին, որը ձգտում էր, պարբերականի բնորոշմամբ, հայ ժողովրդին փրկել սովից և վերաշինել խորհրդային Հայաստանը[50]: Այդ թերթի «Հայաստանի սովեալները» խմբագրականում ասվում էր, որ Հայաստանը սովի ճիրաններից փրկելը պիտի դառնա գաղութահայության կարգախոսը[51]:

Եզրակացություններ

1911-1921 թթ. լույս տեսած հայ ազգայնական-ազատական մամուլի օրգանները («Արագած», «Հայկաշէն», «Պահակ») լուսաբանել են հայ ազգային-մշակութային կյանքը, արծարծել են հայ ժողովրդին հուզող բազմաթիվ հարցեր:

1918 թ. հետո հիշյալ պարբերականների հրապարակումներում առանցքային տեղ է գրավում հայոց պետականության հիմնախնդիրը: Այս թեմայով հրապարակում-

---

[49] Պահակ. 1921, № 84, 89:
[50] Պահակ. 1921, № 77:
[51] Պահակ. 1921, № 90:

ները շատացան Առաջին աշխարհամարտում Օսմանյան Թուրքիայի պարտությունից հետո, երբ Փարիզի վեհաժողովում բարձրացվեց հայկական ազգային պետության ստեղծման հարցը: «Արագածի», «Պահակի», «Հայկաշէնի» էջերում քննարկվում էին ապագա հայկական պետության կառավարման համակարգի, քաղաքական ու տնտեսական կառուցվածքի, հայոց պետությանը սպառնացող վտանգների հարցերը: Ուշագրավ է, որ հատկապես հիշյալ սպառնալիքների թվում (քեմալական շարժում, Ադրբեջանի կողմից տարածքային հավակնություններ, Հայաստանի բոլշևիկացում և այլն) ազատականները բարձրացնում էին նաև ներքին սպառնալիքների խնդիրները: Դրանցից էին հայ քաղաքական ուժերի անմիաբան գործունեությունը, ազգային կենսական խնդիրների նկատմամբ հայության զգալի մասի չեզոք դիրքորոշումը և ազգային անվտանգության հարցի լուծումը հայ ժողովրդից դուրս փնտրելը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արագած, Նյու Յորք, 1911, № 1-6, 8, 11-14, 16, 20:
Արագած, Կ. Պոլիս, 1919, № 1, 16, 19- 21, 35, 38, 41-44, 49:
Արագած, Կ. Պոլիս, 1920 № 1, 50, 51:
Հայկաշէն, Թիֆլիս, 1917, № 1-6:
Հայկաշէն, Թիֆլիս, 1918, № 4:
Պահակ, Բոստոն, 1917, № 67, 70, 72:
Պահակ, Բոստոն, 1918, № 87, 103:
Պահակ, Բոստոն, 1919, № 26, 30, 31, 34, 35, 46, 38, 39:

Պահակ, Բոստոն, 1920, № 46, 54, 56:
Պահակ, Բոստոն, 1921, № 77, 90:

Гегам А. Ованнисян, *Институт истории НАН РА, к.и.н., доцент,* **Национальные проблемы в прессе Реорганизованной партии «Гнчак» (1911-1921)**

Резюме

Издававшиеся в 1911-1921 гг. органы армянской либеральной прессы («Арагац», «Айкашен», «Пахак») освещали армянскую национально-культурную жизнь и поднимали многочисленные вопросы, волновавшие армянский народ.

После 1918 года в публикациях упомянутых периодических изданий центральное место занимает проблема армянской государственности. Публикации на эту тему участились после поражения Османской Турции в Первой мировой войне, когда на Парижской конференции был поднят вопрос о создании Армянского национального государства. На страницах изданий «Арагац», «Пахак», «Айкашен» обсуждались вопросы будущей системы управления армянским государством, политической и экономической структуры, а также угроз армянской государствен–ности. Примечательно, что среди упомянутых угроз (кемалистское движение, территориальные претензии Азербайджана, большевизация Армении) либералы (Реорганизованные гнчакисты) также поднимали проблему внутренних угроз.

К этим угрозам можно отнести отсутствие согласия в действиях армянских политических сил, нейтральную позицию значительной части армянства в отношении жизненно важных национальных проблем, а также попытки решения проблемы национальной безопасности вне армянского народа. Эти подходы Реорганизованных гнчакистов остаются актуальными и в наши дни, а упомянутые проблемы продолжают оставаться в числе

приоритетов внутренней и внешней политики Армении.

Исследование упомянутых периодических изданий освещает многие события того периода и в значительной степени способствует всестороннему и объективному изучению ряда вопросов армянской истории. Армянская либеральная пресса начала 20-го века оставила важный след в развитии армянской политико-публицистической мысли.

***Ключевые слова**:* Реорганизованные гнчакисты, «Арагац», «Пахак», «Айкашен», национальная идеология, Республика Армения, Турция, Россия.

Gegham H. Hovhannisyan, *Institute of History of the NAS RA, Ph.D in History, Associate Professor,* **National Issues in the Press of the Reorganised Hunchak Party (1911-1921)**

Summary

The organs of the Armenian liberal press published between 1911 and 1921 (“Aragats,” “Haykashen,” “Pahak”) extensively covered Armenian national and cultural life, addressing numerous issues that concerned the Armenian people.

After 1918, the issue of Armenian statehood took on a central role in these periodicals. Publications on this topic increased after the defeat of Ottoman Turkey in the First World War, when the creation of an Armenian national state was raised at the Paris Peace Congress. In the pages of “Aragats,” “Pahak,” and “Haykashen,” discussions revolved around the system of governance of the future Armenian state Armenian state, its political and economic framework, and the various threats to Armenian statehood. In addition to external threats (the Kemalist movement, Azerbaijan’s territorial ambitions, and the Bolshevization of Armenia), the liberals (i.e., the Reorganized Hunchakyans) also

emphasized internal dangers. These included the disunited activities of Armenian political factions, the indifference of a significant part of the population to crucial national issues, and the tendency to seek solutions to security concerns from external sources rather than within the Armenian community. The relevance of these concerns, raised by the Reorganized Hunchakyans, persists today, as they continue to figure prominently in Armenia's domestic and foreign policy priorities.

The analysis of these periodicals provides valuable insights into the events of the time and significantly enhances a thorough and unbiased understanding of many aspects of Armenian history. In the early 20th century, the liberal Armenian press left a lasting impact on the development of Armenian political and journalistic thought.

Key words: Reorganized Hunchakyans, "Aragats," "Pahak," "Haykashen," national ideology, Republic of Armenia, Turkey, Russia.